

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ՝

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը և Լիտվայի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը, այսուհետև՝ Կողմեր,

*ցանկություն ունենալով* պահպանելու և ամրապնդելու փոխադարձ համերաշխության և համագործակցության ոգին,

*ձգվելով* ամրապնդել ու զարգացնել ֆիզիկական կրթության և սպորտի բնագավառներում համագործակցությունը, նպաստել ֆիզիկապես և հոգեպես առողջ հասարակության կրթությանը և խրախուսել ֆիզիկական գործունեությունն ու ամրապնդել տարբեր մարզական կազմակերպությունների միջև համագործակցությունը,

*համոզված լինելով*, որ համագործակցությունը ֆիզիկական կրթության և սպորտի բնագավառներում կնպաստի Կողմերի միջև բարեկամությանը և փոխըմբռնմանը,

*ընդունելով*, որ սպորտը պետք է նպաստի հասարակության առողջությանը, բարոյական և ֆիզիկական կրթությանը,

*գործելով* Օլիմպիական խարտիայի սահմանաձև սկզբունքների և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի խորհրդատվության (N R (92) 13 REV) համաձայն, որը հայտնի է նաև որպես Եվրոպական մարզական խարտիա,

համաձայն 1985 թվականի օգոստոսի 19-ին Ստրասբուրգում ընդունված՝ «Մարզական միջոցառումների, մասնավորապես ֆուտբոլային խաղերի ժամանակ հանդիսատեսի կողմից ցուցաբերված անկարգությունների մասին» կոնվենցիայի, 2005 թվականի հոկտեմբերի 19-ին Փարիզում ընդունված՝ «Սպորտում դոպինգի դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիայի, Եվրոպայի խորհրդի նախարարների պատվիրակների կողմից 2014 թվականի հուլիսի 9-ին հաստատված և սույն Համաձայնագրի Կողմերի կողմից 2014 թվականի սեպտեմբերի 18-ին Մազլինգենում ստորագրված՝ Եվրոպայի խորհրդի «Մարզական մրցումների շահարկման մասին» կոնվենցիայի,

համաձայնեցին հետևյալի մասին.

### Հոդված 1

#### Սկզբունքները և համագործակցության բնագավառները

1. Կողմերը համաձայնեցին համագործակցել ֆիզիկական կրթության և սպորտի բնագավառներում սույն Համաձայնագրի հիման վրա՝ իրենց պետությունների օրենսդրությանը և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան:

2. Կողմերի միջև համագործակցությունը կընդգրկի փորձի փոխանակումը՝ հետևյալ բնագավառներում.

- ինստիտուցիոնալ համագործակցություն,
- սպորտային գիտություն և տեխնոլոգիաներ,
- սպորտային բժշկություն,
- հակադոպինգ և մարզական մրցումների շահարկում,
- մարզական հովանավորչություն և կառավարում,
- մարզական կառույցների պլանավորում և շինարարություն,
- մարզական միջոցառումների կազմակերպում՝ կենտրոնանալով, մասնավորապես, հասարակական կարգի և անվտանգության վրա,
- մարզաձևերի զարգացում,
- սպորտի մասնագետների և վարչական աշխատողների որակավորման բարձրացում,
- աջակցություն հաշմանդամային սպորտին և դրա զարգացմանը,
- ֆիզիկական գործունեության խթանում և բոլորի համար սպորտի զարգացում՝ մասնավորապես կենտրոնանալով ֆիզիկական

ակտիվության և երեխաների ու երիտասարդների համար սպորտի վրա,

- կրթություն և սոցիալական ներգրավվածություն սպորտի միջոցով,
- ֆիզիկական կրթությանը և սպորտին առնչվող այլ բնագավառներ:

## Հոդված 2

### Կողմերի պարտավորությունները

1. Նպատակ ունենալով համագործակցել 1-ի հոդվածի 2-րդ կետում նշված բնագավառներում՝ Կողմերը համաձայնեցին.

- փոխանակել տեղեկություն և կարծիքներ, ինչպես նաև՝ հաջողված փորձը,
- փոխանակել սեմինարների, համաժողովների և այլ հանդիպումների վերաբերյալ տեղեկություն,
- փոխանակել ֆիզիկական կրթության և սպորտի մասին օրենսդրության մշակման վերաբերյալ փորձը,
- խրախուսել երկու երկրների ազգային մարզական ֆեդերացիաներին՝ հաստատելու անմիջական հարաբերություններ և ամրապնդելու փոխադարձ համագործակցությունը,
- համագործակցել ֆիզիկական կրթության և սպորտի բնագավառներում այլ գործունեություն իրականացնելիս:

2. Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերն իրենց հնարավորության սահմաններում փոխադարձ ուսուցանման և փորձառության նպատակով կփոխանակեն մասնագետների, փորձագետների և այլ անձանց, կմասնակցեն Կողմերի պետություններում կազմակերպված դասընթացներին, սեմինարներին, գիտաժողովներին, համաժողովներին և այլ միջոցառումների:

3. Կողմերը նաև կաջակցեն իրենց մարզիկների մասնակցությանը մարզական մրցումներին և/կամ Հայաստանի Հանրապետությունում և Լիտվայի Հանրապետությունում կազմակերպված մարզումներին:

### Հողված 3 Պատասխանատու մարմիններ

1. Սույն Համաձայնագրի դրույթների կիրարկման համար պատասխանատու կլինեն հետևյալ մարմինները.

ա) Հայաստանի Հանրապետությունում՝

- Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն  
Արուվյան 9, 0001, Երևան  
Հեռ.՝ (+374 11) 528601  
Ֆաքս՝ (+374 11) 526529  
Էլ. փոստ՝ [msy@msy.am](mailto:msy@msy.am)

բ) Լիտվայի Հանրապետությունում՝

- Ներքին գործերի նախարարություն  
Շվյանտարագիս փող. 2, LT-01510, Վիլնյուս  
Հեռ.՝ (8 5) 271 71 30  
Ֆաքս՝ (8 5) 271 85 51  
Էլ. փոստ՝ [bendrasisd@vrm.lt](mailto:bendrasisd@vrm.lt)
- Լիտվայի Հանրապետության Կառավարությանն առընթեր ֆիզիկական կրթության և սպորտի վարչություն  
Շյամայտե փող. 6, LT-03117, Վիլնյուս  
Հեռ.՝ (8 5) 233 53 53  
Ֆաքս՝ (8 5) 213 32 21  
Էլ. փոստ՝ [kksd@kksd.lt](mailto:kksd@kksd.lt)

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է մյուս Կողմին գրավոր և փոստի կամ ֆաքսի միջոցով ծանուցի պատասխանատու մարմինների կամ նրանց անունների կամ գործառույթների ցանկացած փոփոխության մասին ոչ ուշ քան այդ փոփոխություններից առնվազն յոթ (7) օրվա ընթացքում:

### Հողված 4 Ծախսերը

Կողմերը համաձայնության կգան սույն Համաձայնագրի կիրարկումից բխող ծախսերի վերաբերյալ ամեն առանձին դեպքի համար:

**Հոդված 5  
Վեճերի կարգավորում**

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրարկման ընթացքում ծագած ցանկացած տարաձայնություն կամ վեճ կլուծվի Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

**Հոդված 6  
Եզրափակիչ դրույթներ**

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

2. Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել փոխադարձ համաձայնությամբ: Այդ փոփոխությունները և լրացումները կկազմեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն հոդվածի դրույթների համաձայն:

3. Սույն Համաձայնագիրը կարող է դադարել Կողմերից մեկի գրավոր ծանուցմամբ: Համաձայնագիրը կդադարի դադարեցման մասին ծանուցագիրն ստանալու օրվանից 90 (իննսուն) օր հետո, սակայն ծանուցման պահին իրականացվող ծրագրերը չեն դադարեցվի:

Կատարված է Երևանում 2017 թվականի հոկտեմբերի 4-ին՝ հայերեն, լիտվերեն և անգլերեն. բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ ցանկացած տարաձայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տարբերակին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ՝**



**ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**

